

**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը Գյումրու
« Վերածնունդ» IX-րդ միջազգային մրցույթ փառատոնում Արագածոտնի
մարզի մրցանակակիրների հանձնման ժամանակ**

Ողջունում եմ բոլոր մասնակիցներին, ովքեր իրավունք են նվաճել Արագածոտնի մարզը ներկայացնել Գյումրու « Վերածնունդ » միջազգային փառատոնին: Ուրախ եմ, որ Աշտարակի, Թալինի, Ուջանի երաժշտական դպրոցների 28 սան զբաղեցրել է մրցանակային տեղեր ու արժանացել դիպլոմների:

Շնորհակալ եմ միջազգային փառատոնի կազմակերպիչներին, ում շնորհիվ աշխարհի 34 երկրներից 3000 մասնակից եկել է Հայաստան, մասնակցել 19 անվանակարգերի շրջանակում կազմակերպվող մրցույթին;

Հետաքրքիր է, որ այս տարի նախորդ տարվա 18 անվանակարգին ավելացել է ևս մեկը՝ զինվորականը:

Սիրելի ծնողներ, ուսուցիչներ հպարդություն է, երբ մեր սաները մասնակցում են այսպիսի պատասխանատու մրցույթի և վերադառնում ձեռքբերումներով: Սա ձեր աշխատանքի գնահատականն է: Արագածոտնի մարզի բոլոր երաժշտական դպրոցներն ամեն տարի սիրով են սպասում փառատոնի հայտարարությանը: ՀՀ Արագածոտնի մարզպետարանը մշտապես իր աջակցությունն է ունենում կազմակերպչական հարցերում, հանուն մշակույթի զարգացման և մատաղ սերնդի կրթման և դաստիարակման:

29.05.2017թ.